ՏՆԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (IN-HOME SUPPORTIVE SERVICES) ԾՐԱԳԻՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ ՍՏԱՑՈՂԻՆ, ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻ՝ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՈՎ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿՐԿՆՎՈՂ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ

(ADDRESSEE)

Վարչաշրջան՝ _____

Ծանուցման ամսաթիվը՝ _____
Ստացողի անունը՝ _____
Ստացողի գործի համարը՝ _____
IHSS գրասենյակի հասցեն՝ _____
_____
IHSS գրասենյակի հեռախոսահամարը՝ _____

Ում՝ Տնային աջակցության ծառայությունների (IHSS) ստացողին

Այս ծանուցումը տեղեկացնում է ձեզ, որ մենք հաստատել ենք ձեր խնդրանքը փոփոխել ձեր առավելագույն շաբաթական ժամերը յուրաքանչյուր ամսվա հատուկ շաբաթում՝ ամսական կրկնվող իրադարձության պատճառով: Դուք կարող եք թույլ տալ ձեր մատակարարողին աշխատել այս լրացուցիչ ժամերը յուրաքանչյուր ամսվա այդ հատուկ շաբաթվա ընթացքում:

Սա նշանակում է, որ ձեր առավելագույն հաստատված ժամերն ամսվա մեկ շաբաթվա համար տարբերվելու են ամսվա մյուս շաբաթներից: Ձեր մատակարարող(ներ)ը կարող է շարունակել աշխատել այս շաբաթական ժամատախտակով բոլոր հաջորդ ամիսներին, եթե դուք շարունակում եք ունենալ այս փոփոխության կարիքը՝ կրկնվող իրադարձության պատճառով: Դուք պետք է անմիջապես տեղեկացնեք վարչաշրջանին, եթե ձեր իրավիճակը փոխվում է, և ձեզ այլևս հարկավոր չէ այս փոփոխությունը:

Բացի դրանից, եթե ձեր մատակարարող(ներ)ն աշխատել է այդ ժամերն, դուք պետք է փոփոխեք ձեր աշխատանքային ժամերը՝ նվազեցնելով հաստատված բացառության ժամերի քանակին հավասար քանակով մինչև ամսվա վերջ՝ համոզվելու համար, որ ձեր ամսական հաստատված ժամերը չեն գերազանցվում: Եթե չփոխեք ձեր մատակարարողի աշխատանքային ժամերը մինչև ամսվա վերջ, ձեր մատակարարող(ներ)ը չի վճարվի IHSS ծրագրի կողմից ավելորդ ժամերի համար, և դուք պատասխանատու կլինեք որևէ ծառայության աշխատած ժամերի վճարման համար, որոնք գերազանցում են ձեր ամսական հաստատված ժամերը:

Եթե լրացուցիչ հարցեր ունեք այս ծանուցման վերաբերյալ, ապա կարող եք դիմել ձեր վարչաշրջանի IHSS գրասենյակ վերոնշյալ հեռախոսահամարով: